Ներկայ տարւոյս հոկտեմբերի 26ը և նոյեմբերի 10ը դժբախտութեան և խոր սգոյ օրեր էին Մայր Աթոռոյս Ճեմարանի համար։ Այդ միմեանցից 15 օր հեռաւորութիւն ունեցող օրերում վախճանեցան Բ. լսարանի երկու ուսանողներ՝ Քիշնեցի ԼՈՒՍԵՂԷՆ Տեօլվերեան և Վաղարշապատցի ՏԻԳՐԱՆ Թառոմեան, երկու ընտիր երիտասարդներ, որոնք իւրեանց հեզահամբոյր վարքով և տոկուն աշխատասիրութեամբ սիրելի էին ամենքին։

Տեօլվերեան ծնել էր 1867 փետրվարի 24ին, իսկ Թառումեան 1869ի նոյեմբերի 20ին։ Երկուսն էլ չքաւոր ծնողաց և մեծ գերդաստանի զաւակներ, նոցա ապագայ յոյսեր։

Հանգուցեալները պատշաճաւոր յուղարկաւորութեամբ, առաջինը՝ հոկտեմբերի 27ին և երկրորդը՝ նոյեմբերի 14ին թաղուեցան միաբանից գերեզմանատանը։

Անցեալ նոյեմբերի 9ին վախճանեցաւ Ռուսաստանի Տուլա քաղաքում Նորքեցի երիտասարդ Միքայէլ Տէր Աւետիքեանն, որ Ս. Էջմիածնի Ճեմարանի երկրորդ լսարանից դուրս գալով, գնացել էր վերոյիշեալ քաղաքը զինաշինութեան արհեստը սովորելու։ Հանգուցեալը բոլոր իւր ընկերակցաց և ծանօթից սիրելի է եղած։ Նոյեմբերի 21ին Երևանի Նորք թաղամասնի եկեղեցում պատարագ մատուցուեցաւ և հոգեհանգիստ կատարուեցաւ ի փրկութիւն հոգւոյ հանգուցելոյն։ Հայր Սահակ վարդապետն Ամատունի այս առթիւ սրտաշարժ և ազդու ճառ խօսեցաւ որ մեծ տպաւորութիւն գործեց հանդիսականների վերայ։

Լուսաւորիչն հոգւոց, Տէրն մեր Յիսուս Քրիստոս պայծառացեալ լուսաւորեսցէ զհոգիս վերոյիշեալ ծառայից իւրոց և հանգուսցէ ի լոյս երեսաց իւրոց և մխիթարիչ Հոգին Սուրբ մխիթարեսցէ զվշտացեալ սիրտս ծնողաց, ուսուցչաց և համայն ընկերակցաց հանգուցելոյ։